Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 7- 12 հունվարի, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

gmp International GmbH ճարտարապետաինժեներական ընկերութուն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Ակադեմիական քաղաք» ծրագրի հետագա քայլերի քննարկմանը և ծանոթացում Գերմանիայում գործող նմանատիպ նախագծերին, Մյունխենի տեխնիկական համալսարանի՝ «Մյունխենի տեխնիկական համալսարան-միջազգային» (TUM international GmbH) կազմակերպության հետ համագործակցության հուշագրի կնքում

6. Քննարկված թեմաները

1. «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում համագործակցության հեռանկարները և հնարավոր ձևաչափերը,
2. Ճանաչողական այցեր «Gerkan, Marg and Partners (gmp) international» ճարտարապետաինժեներական ընկերության կողմից նախագծված կենտրոններ,
3. Այցելություն «Մյունխենի տեխնիկական համալսարան-միջազգային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրասենյակ և Մյունխենի տեխնիկական համալսարանի Գարխինգի կամպուս

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը ճանաչողական այցով եղել է gmp ճարտարապետաինժեներական ընկերության գրասենյակում, ինչպես նաև նրանց կողմից նախագծված Բեռլինում

Թիգել օդանավակայան-ինովացիոն կամպուս և Մյունխենում՝ Գաստայգ կենտրոն, որտեղ գտնվում է նաև Իզար ֆիլիարմոնիկ համերգասրահը:

Այցելություններ են կայացել նաև Բեռլինի Ադլերսհոֆ գիտական քաղաք, Էյնշտեյնի հիմնադրամի թվային ապագայի կենտրոն, Մյունխենի քաղաքային կոլաբ կենտրոն (Munich Urban Collab), և Մյունխենի տեխնիկական համալսարանի Գարխինգի կամպուս:

gmp International GmbH ճարտարապետաինժեներական ընկերության գրասենյակում հանդիպումներ են կայացել ընկերության տնօրեն Շտեֆան Շուցի և «Ակադեմիական քաղաք» ծրագրի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներում ներգրավված թիմի՝ նույն ընկերության փոխտնօրեն Թոբիաս Քաելի և աշխատակիցների հետ, ինչպես նաև Ճարտարապետական մշակույթի ակադեմիայի (aac Academy for Architectural Culture) տնօրեն Էնո Մասի հետ: Քննարկվել է Գլխավոր հատակագծի մշակման ընթացքը, «Հայֆիլմ»-ի տարածքը ակադեմիական քաղակի գլխավոր հատակագծում ներառելու հարցը, ինչպես նաև Ճարտարապետական մշակույթի ակադեմիայի ներգրավումը «Հայֆիլմ»-ի տարածքի հայեցակարգի մշակման մեջ, որն իրականացվելու է միջազգային ուսանողական աշխատաժողովի միջոցով՝ Հայաստանում և Համբուրգում, որին մասնակցելու են նաև ուսանողներ Հայաստանից:

Բեռլինի Ադլերսհոֆ գիտական քաղաքում հանդիպումներ են կայացել քաղաքի ենթակառուցվածքները կառավարող «Վիստա» ընկերության ներկայացուցչի հետ, ներկայացվել են քաղաքի կայացման պատմությունը և դրա կառավարման մանրամասները, պայմանավորվածություն է ձեռք բերվել գտնելու համագործակցության ընդհանուր ուղիներ Գիտական պարկերի միջազգային ասոցիացիայի հարթակում (International Association of Science Parks and Areas of Innovation):

Թիգել օդանավակայանում հանդիպում է կայացել օդանավակայանը ինովացիոն կամպուսի վերափոխման ծրագրի պատասխանատու՝ Թիգել նախագծի (TEGEL PROJEKT GmbH) տնօրեն Գուդրուն Սախի հետ, ներկայացվել է Թիգելի պատմությունը և գլխավոր հատակագծով նախատեսված գոտեվորումը, ինչպես նաև կառավարման մոդելը՝ ներառյալ տեղանքի կառավարման համար նախատեսվող թվային համակարգը:

Էյնշտեյնի հիմնադրամի թվային ապագայի կենտրոնում հանդիպում է տեղի ունեցել կենտրոնի տնօրենների խորհրդի անդամ Անդրեա Կոմինոլայի հետ, ներկայացվել է Բեռլինի քաղաքապետարանի հիմնադրած Էյնշտեյն հիմնադրամի առաքելությունը, որը հանդիսանում է միջգիտակարգային հետազոտությունների խթանման և դրա համար համապատասխան միջավայրի ստեղծման օղակ: Քննարկվել են միջգիտակարգային երկխոսությունը կազմակերպելու մեթոդական եղանակները, ինչպես նաև նման հետազոտությունները ֆինանսավորելու գործիքակազմը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցելու «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում միջգիտակարգային հարթակների ստեղծման և դրանց գործունեության կազմակերպման հարցերում:

Մյունխենում այցելություն է տեղի ունեցել Գաստայգ կենտրոնում, որի կազմում գործում է Իզար Ֆիլիարմոնիկ համերգասրահը: Կենտրոնում շրջայց է կազմակերպել տնօրենի օգնականը, ներկայացվել են կենտրոնի կառուցման և կայացման պատմությունը, կենտրոնում տեղակայված կազմակերպությունները, դրանց տեղակայման պայմանները, ինչպես նաև շրջայց է իրականացվել Իզար Ֆիլիարմոնիկ համերգասրահում, ներկայացվել է համերգասրահի տրանսֆորմեր մեխանիզմը:

Մյունխենի «Ուրբան Կոլաբ» կենտրոնում հանդիպում է տեղի ունեցել «Մյունխենի տեխնիկական համալսարան - միջազգային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրասենյակում (TUMinternetional)՝ տնօրեն Ֆրիեդերիկե Հեթինգերի և ծրագրի ղեկավար Ջորջետա Աուկտորի հետ, ներկայացվել է TUM միջազգային ընկերության փորձը և «Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակում ընկերության ներգրավման առաջարկությունը, որի շրջանակում առաջարկվել է համագործակցություն՝ Տեխնոլոգիական կլաստերի կառուցվածքի մշակման հարցում նախագծողների խորհրդատվության, կլաստերի կառավարման, կառավարիչների վերապատրաստման, ժամանակակից բովանդակության մշակման և ակադեմիական անձնակազմի վերապատրաստման, ինչպես նաև ամբողջ տեղանքի կառավարման սկզբունքները մշակելու հարցերում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ TUM միջազգային ընկերությունը առաջարկության փաթեթը կներկայացնի առաջիկա երկու շաբաթների ընթացքում՝ հետագա համագործակցության կազմակերպման մեխանիզմները քննարկելու նպատակով: Կազմակերպվել է նաև շրջայց Կոլաբ կենտրոնի տարածքում, որը

հանդիսանում է Մյունխենի քաղաքապետարանի և Մյունխենի տեխնիկական համալսարանի համատեղ հիմնադրած ստարտափների ինկուբատոր, ներկայացվել են գործունեության հիմունքները, ինչպես նաև պայմանավորվածություն է ձեռք բերվել կառույցի կառավարման մոդելը տեղայնացնելու Ակադեմիական քաղաքում նախատեսվող ինկուբատորների կառավարման մոդելում:

Մյունխենի տեխնիկական համալսարանի Գարխինգի կամպուս կատարված այցի ընթացքում հանդիպում է կայացել համալսարանի նախկին ռեկտոր Վոլֆգանգ Հերմանի հետ, ներկայացվել են կամպուսի կառուցման պատմությունը, դրա շուրջ մի շարք բուհերի միավորման գործընթացը՝ նորամուծությունները, կամպուսի կառուցվածքը և կառավարման մեթոդները, խոշոր մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության պատմությունը և եղանակները: Կազմակերպվել է շրջայց Մյունխենի տեխնիկական համալսարանի Գարխինգի կամպուսում՝ ծանոթանալու կամպուսի կառուցվածքին և դրանում առկա խոշոր ենթակառուցվածքներին:

Կազմակերպվել է նաև այցելություն Գարխինգի կամպուսում տեղակայված համալսարանի և Գերմանիայի էկոնոմիկայի նախարարության կողմից հիմնադրված «Գեյթ» (Garching center for technology and founders GmbH) ստարտափների համալսարանական ինկուբատորի տարածք, որտեղ կենտրոնի բիզնեսի և համայնքի զարգացման գծով փոխտնօրեն Կատյա Աբելը ներկայացրել է ինկուբատորի տարածքը, դրա աշխատանքի սկզբունքները:

Գործուղման ընթացքում gmp ճարտարապետաինժեներական ընկերության կողմից նախատեսված ճանաչողական այցելությունը դեպի Հայդելբերգի համալսարանական կամպուս և հանդիպումը Հայդելբերգի քաղաքապետի հետ տեղի չի ունեցել երկաթուղիների գործադուլի պատճառով և այլընտրանքային ուղևորության կազմակերպման ժամանակ տեխնիկական խնդիրների առաջացման հետևանքով, սակայն հեռազանգով պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպելու տեսազանգ և ֆիզիկական այցելությունը նախատեսել հետագայում:

<u>8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Այցի ընթացքում gmp գրասենյակում քննարկման արդյունքում որոշում է կայացվել պայմանագրի շրջանակում «Ակադեմիական քաղաք» ծրագրի գլխավոր հատակագծում ներառել նաև «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքը:

Այցի ընթացքում ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և «Մյունխենի տեխնիկական համալսարան-միջազգային» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև հունվարի 11-ին ստորագրվել համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն քննարկումները շարունակելու և հետագայում համագործակցային ծրագրերի իրականացման նպատակով համապատասխան պայմանագրերի մշակման վերաբերյալ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

17.01.2024թ.